

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը վերջին զանգի կապակցությամբ

Միրելի շրջանավարտներ, եկավ այն օրը, երբ գիտելիքների ամբողջական պաշարով և ձեր տարիքին հասուկ խանդավառությամբ՝ պատրաստ եք նվաճելու նորանոր բարձրունքներ:

Վերջին զանգն ազդարարում է արարման նոր փուլ, որտեղից շնինդով են բացվելու կյանքի կանաչ արահետները:

Ձեր ազնվությունը և հայրենասիրական գաղափարներն այսօր, քան երբեք անհրաժեշտ են մեր անկախ պետության հզորությունն էլ ավելի ամրապնդելու և փայփայելու ազգային արժեքները, տիրոջ իրավունքով կանգնելու մայր հողին:

Հանձին ձեզ՝ մեր հայրենիքը տեսնում է ապագա կառուցողին, նախորդ սերունդներին նպատակների ազնիվ շարունակողին: Այդ ամենը դուք վաստակել եք տասը և ավելի տարիների ընթացքում՝ ձեր կողքին ունենալով կրթող ու դաստիարակող ուսուցիչներ, որոնց օրինակը լինելու է ճիշտ ապրելու բացառիկ խորհրդանիշ: Ահա թե ինչու այսօր՝ Վերջին զանգի առիթով, դուք մեծագույն հուզմունքով և հոգու լուսավոր թրթիռներով եք հրաժեշտ տալիս սիրելի դպրոցին և նույնքան սիրելի ուսուցիչներին:

Օրվա տոնական տրամադրությունները, կրթօջախների ներշնչանքը, ուսուցիչների և երջանկացած ծնողների ցանկությունները նվիրումի և օրհնության ոգեղեն պաշար են ձեր վաղվա մեծ երթի, սպասումների, հույսերի և սեփական ճակատագիրը կերտելու ճանապարհին:

Միրելի շրջանավարտներ, կրկին շնորհավորելով ձեր տոնը՝ ցանկանում եմ, որ միշտ լինեք առջևում, նորանոր հաղթանակներով դառնաք մեր հայրենիքի և ազգային ոգու վսեմ ջահակիրներ:

Բարի երթ ձեզ ու կանաչ ճանապարհ:

Լավագույն ցանկություններով՝

Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան